

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՎԵՐԱՀՍԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ,
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՁՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐԽԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ,
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների իրազեկվածության մակարդակը նախընտրական քարոզչության ֆինանսավորման և դրա նկատմամբ վերահսկողության բնագավառում և նպաստել ընտրական գործընթացի նշված փուլը կարգավորող իրավանորմերի պատշաճ կիրառմանը:

Սույն ձեռնարկը կազմվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա, սակայն այն չի կարող համարվել ՀՀ ընտրական օրենսգրքին և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին փոխարինող փաստաթուղթ:



Ձեռնարկը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փորձագետների աջակցությամբ՝ «Հայաստանի ընտրական վարչարարության և ժողովրդավարական մշակույթի առաջխաղացում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացնում է Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ:

The guidebook is developed with the expert assistance the Central Electoral Commission of the Republic of Armenia within the framework of Advancing Armenia's Election Management and Democratic Culture (AAEM-DC) project.

The AAEM-DC project is supported by the United States Agency for International Development (USAID) and implemented by International Foundation for Electoral Systems (IFES).



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ: ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով բացում են նախընտրական հիմնադրամ:

Նախընտրական առանձին հիմնադրամ ձևավորել չեն կարող՝



- ◆ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները.
- ◆ միայն համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները:

Հանրապետության Նախագահի թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են՝ հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող հետևյալ առևտրային բանկերից մեկում՝



- «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
- «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
- «Հայէկոնամբանկ» ԲԲԸ
- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
- «Յունիբանկ» ՓԲԸ

Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ՝

- ◆ թեկնածուների դիմումների հիման վրա՝ թեկնածուների կամ նրանց լիազոր ներկայացուցիչների անվամբ.
- ◆ կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների դիմումների հիման վրա՝ նրանց լիազոր ներկայացուցիչների անվամբ:

Այդ ժամանակավոր հատուկ հաշվեհամարներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

«Նախընտրական օրենսգիրք, 25-րդ հոդված
«Ն 4ԸՆ 11.08.2011թ. N 53-Ն որոշում»





Ուշադրություն՝

Ավագանու անդամի և մինչև 10.000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուն բացում է նախընտրական հիմնադրամ և ներկայացնում հայտարարագիր, եթե.

- ♦ գանգավաճային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման,
- ♦ դահլիճների, տարածքների վարձակալման,
- ♦ քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման

Ֆինանսավորման համար օգտագործում է (կարող է օգտագործել) նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար:



«Ներկայացնում է ընտրական օրենսգիրք, 140-րդ հոդված»

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ, ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ



Թեկնածուի նախընտրական հիմնադրամը համալրվում է՝

1. թեկնածուի անձնական միջոցներից.
2. թեկնածուին առաջադրած կուսակցության տրամադրած միջոցներից.
3. ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից:

Համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցության, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

1. այդ կուսակցության, կուսակցությունների դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների միջոցներից.
2. ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից:



Ուշադրություն՝

Վերը չնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նախընտրական հիմնադրամների հաշվին մուծած գումարները, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը գերազանցող մասերը փոխանցվում են պետական բյուջե:

Նախընտրական հիմնադրամներում կատարվող մուծումների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափերն են՝

Հանրապետության Նախագահի ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 25.000-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը

Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 15.000-ապատիկը
2.	Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին	Նվազագույն աշխատավարձի 15.000-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը

Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկը
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 2.000-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը

Մինչև 10.000 ընտրող ունեցող համայնքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը

10.000 և ավելի ընտրող ունեցող համայնքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը

Երևանի ավագանու ընտրությունների դեպքում

<i>h/h</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը</i>	<i>Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը</i>
1.	Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություն	Նվազագույն աշխատավարձի 10.000-ապատիկը
2.	Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին	Նվազագույն աշխատավարձի 10.000-ապատիկը
3.	Յուրաքանչյուր ֆիզիկական անձ	Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՌԱՆՁԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

Թեկնածուները նախընտրական հիմնադրամի միջոցները կարող են օգտագործել նախընտրական քարոզչություն իրականացնելուն ուղղված ցանկացած միջոցառման ֆինանսավորման համար:

Միայն նախընտրական հիմնադրամի միջոցներով կարող են ձեռք բերվել (ֆինանսավորվել)՝

- ◆ զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացումը.
- ◆ դահլիճների, տարածքների վարձակալումը.
- ◆ քարոզչական պաստառների պատրաստումը (տեղադրումը).
- ◆ քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերումը, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստումը:

Միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համար կատարվող ծախսերի ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը:

h/h	Թեկնածուներ	Առավելագույն չափ
1.	Հանրապետության Նախագահի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկը
2.	Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցող կուսակցություն, կուսակցությունների դաշինք	Նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկը
3.	Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 10.000-ապատիկը
4.	Մինչև 4.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը
5.	4.000-ից մինչև 10.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 7.000-ապատիկը
6.	10.000-ից մինչև 70.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 15.000-ապատիկը
7.	70.000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 25.000-ապատիկը
8.	Մինչև 4.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը
9.	4.000-ից մինչև 10.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկը
10.	10.000-ից մինչև 70.000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը

11.	70.000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածու	Նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը
12.	Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություն, կուսակցությունների դաշինք	Նվազագույն աշխատավարձի 75.000-ապատիկը



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրական հանձնաժողովներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմին տրամադրված միջոցների օգտագործման, նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստեղծում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն:

«*Ընտրական օրենսգիրք 28-րդ հոդված*



Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ **3 աշխատանքային օրը մեկ**, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող
 տեղեկանքի օրինակելի ձև

ՏԵՐԵԿԱԼՔ

Նշվում է ընտրության անվանումը («Հանրապետության Նախագահի» կամ «ԱԺ համամասնական ընտրակարգով» կամ «Երևան ավագանու» բառերը)

2012 թ. _____ « _____ »-ի ընտրություններին մասնակցող _____
 Նշվում է «Հանրապետության Նախագահի թեկնածուների»
 բառերը, իսկ համամասնական ընտրակարգի դեպքում
 «կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների» բառերը

ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերաբերյալ

h/h	Հանրապետության Նախագահի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, իսկ կուսակցության (կուսակցությունների դաշինքների) դեպքում՝ անվանումը	Նախընտրական հիմնադրամի բացման օրը, ամիսը, տարեթիվը և հաշվեհամարը	Մուտքերի ժամանակագրությունը	Մուտքերի չափը	Ելքերի ժամանակագրությունը	Ելքերի չափը	Նախընտրական հիմնադրամի մնացորդը

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝ _____
 ստորագրություն
 օր, ամիս, տարեթիվ

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող
փեղեկանքի օրինակելի ձև

ՏԵՐԵԿԱԲ

Նշվում է ընդ որում անվանումը («Հանրապետության Սահագրահի» կամ «Աժ համանանական ընդրակարգով» կամ «Երևան ավագանու» բառերը)

2012 թ. _____ « _____ » -ի ընտրություններին մասնակցող _____

Նշվում է Հանրապետության Սահագրահի թեկնածուի
ագագանուն, անուն, հայրանունը, իսկ համանանական ընդրակարգի
դեպքում՝ կրտսկցության, կրտսկցությունների դաշինքի անվանումը

ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերաբերյալ

հ/հ _____

Մուտքերի ժամանակագրությունը	Մուտքերի չափը	Ելքերի ժամանակագրությունը	Ելքերի չափը	Հիմնադրամի մնացորդը

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

ստորագրություն

օր, ամիս, տարեթիվ

ՀՀ բոլոր մարզերում մասնաճյուղեր ունեցող
առևտրային բանկերի կողմից ներկայացվող
տեղեկանքի օրինակելի ձև

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ _____ ընտրատարածքում

Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի
թեկնածու _____ -ի

_____ - ում բացված

նշվում է բանկի կամ բանկի մասնաճյուղի անվանումը

Նախընտրական հիմնադրամի ֆինանսական
մուտքերի և ելքերի վերաբերյալ (հ/հ _____):

Մուտքերի ժամանակագրությունը	Մուտքերի չափը	Ելքերի ժամանակագրությունը	Ելքերի չափը

ՀՀ բանկի կամ մասնաճյուղի կառավարիչ՝

անուն, ազգանուն

ստորագրություն

օր, ամիս, տարեթիվ



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը (այսուհետ՝ հայտարարագիր) թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:


Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների (բացառությամբ Երևանի ավագանու), ինչպես նաև Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ հայտարարագիրը ներկայացվում է նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված)

(ՀՀ ԿԸՀ 11.08.2011թ. N 53-Ն որոշում)



Ուշադրություն՝

- ◆ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները հայտարարագիր ներկայացնում են միայն զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կատարված ծախսերի վերաբերյալ:
- ◆ Հայտարարագիրը ներկայացնում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ Adobe Acrobat  (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ: Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից (www.elections.am) և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

- ◆ Հայտարարագրի թղթային տարբերակին կից ներկայացվում է հայտարարագրում նշված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերը (պայմանագիր, վճարման հանձնարարական և այլն):

Հայտարարագրի թղթային տարբերակը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է կից գրությամբ:

Առաջարկվող օրինակելի ձև

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողով

Կից ներկայացվում է _____
(նշվում է թեկանծուի անուն ազգանունը, կուսակցության, կուսակցությունների դաշինքի դեպքում՝ անվանումը)

_____ նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր՝ _____ թերթ:

Թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի դեպքում նրանց լիազոր ներկայացուցչի անուն ազգանունը

_____ ստորագրություն

Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը՝ 2 օրվա ընթացքում, հայտարարագրում ներառված տվյալները համադրում է բանկերից ստացված տեղեկատվության հետ, ստուգում է կատարված ծախսերի հավաստիությունը, ստուգման արդյունքներով կազմում է տեղեկանք և ներկայացնում կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովի նիստում քննարկելուց հետո տեղեկանքը և հատարարագիրը տեղադրվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:



Ուշադրություն՝

*Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապարվող բոլոր գործառույթությունները **դադարեցվում են քվեարկության օրվանից:***

Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կապարված գործարքների համար:



<< ընտրական օրենսգիրք 26-րդ հոդված, 7-8 մասեր

- ◆ Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում, թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի հայեցողությամբ օգտագործվում են բարեգործական նպատակներով:
- ◆ Եռամսյա ժամկետը լրանալուց հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:
- ◆ Ընտրությունները չկայացած ճանաչվելու դեպքում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները սառեցվում են մինչև նոր ընտրությունների համար թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը: Նոր ընտրությունների դեպքում թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կարող են օգտագործել իրենց նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները:

Առաջարկվող օրինակելի ձև

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողով

_____ (ընտրության անվանումը)

_____ -ից

*(թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի,
կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր
ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանունը)*

ԴԻՄՈՒՄ

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ խնդրում եմ թույլատրել նախընտրական հիմնադրամից վճարումներ կատարել քվեարկության օրվանից հետո, մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Կից ներկայացվում է մինչև քվեարկության օրը կատարված գործարքների պայմանագրերի պատճենները:

Առդիր՝ _____ թերթ:

Դիմող՝ _____

*(թեկնածուի անուն, ազգանունը,
կուսակցության, կուսակցությունների դաշինքի
լիազոր ներկայացուցչի անուն, ազգանունը)*

_____ (ստորագրություն)

« _____ » _____ 20 ____ թ.

Նոր ընտրություններին չմասնակցող թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:



Ուշադրություն՝

Չանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացումը.

- ◆ դահլիճների, տարածքների վարձակալումը.
- ◆ քարոզչական պաստառների պատրաստումը (տեղադրումը).
- ◆ քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերումը, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստումը,

Եթե մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:



ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

- ◆ Եթե հիմնավորվում է, որ նախընտրական քարոզչության համար մատուցված ապրանքը կամ ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում՝ պարտավորեցնելով թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով գումար փոխանցել պետական բյուջե:
- ◆ Եթե հիմնավորվում է, որ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են նախընտրական հիմնադրամի՝ օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա ընտրական հանձնաժողովը

որոշում է կայացնում՝ պարտավորեցնելով թեկնածուին, կուսակցությա-
նը, կուսակցությունների դաշինքին հիմնադրամի՝ օրենսգրքով սահ-
մանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չա-
փով գումար փոխանցել պետական բյուջե:

- ◆ Եթե նախընտրական քարոզչության համար ծախսված գումարի և վերը նշված՝ պետական բյուջե վճարվող գումարների գումարի չափի և նա-
խընտրական հիմնադրամի՝ օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 10 տոկոսը, ապա ընտ-
րական հանձնաժողովի դիմումի հիման վրա դատարանը ուժը կորց-
րած է ճանաչում թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դա-
շինքի ընտրական ցուցակի գրանցումը:
- ◆ Վերը նշված գումարներն ընտրական հանձնաժողովի որոշումից հե-
տո՝ հնգօրյա ժամկետում, պետական բյուջե չփոխանցելու կամ նույն
ժամկետում ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով
չքողքարկելու դեպքում ընտրական հանձնաժողովը նշված գումարը
գանձում է դատական կարգով:



Ուշադրություն՝

Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերա-
բերյալ հայտարարագիր չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշա-
նակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկու-
հարյուրապատիկի չափով:

ՎիՎ ՀՀ օրենսգիրք 40.3-րդ հոդված



Հ Ա Յ Ա Ր Ա Ր Ա Փ Ի Ր

Նախընտրական հիմնարկում կատարված մուժմունքի և դրան օգտագործման

ընտրության անվանում

թեկնածուի անուն, հայրանուն, ազգանուն, կրթակարգը, կրթակետի անվանում

հաշվետու ժամանակահատված

Մուտքեր	Ծախսեր				Ընդամենը		
	Հիմնարկում մուժմունքների ժամանակագրություն (ՀՀ դրամ)	Հիմնարկում մատուցված ծախսերի և ծախսաբեռների ծանուցման ժամանակագրություն	Հիմնարկում կատարված ծախսերի և ծախսաբեռների ծանուցման ժամանակագրություն	Հիմնարկում կատարված ծախսերի և ծախսաբեռների ծանուցման ժամանակագրություն			
1	2	3	4	5	6	7	8
Ընդամենը							

Հիմնարկում մուժմունքների ծախսերի և ծախսաբեռների ծանուցման ժամանակագրություն

Հայտարարագիրը բաղկացած է _____ թերթից, կից պայմանագրերը, փաստաթղթերը՝ _____ թերթից:


թեկնածուի ստորագրություն,

կրթակարգը, կրթակետի անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն,

օր. ամիս, տարի/թիվ



1. Հայտարարագիրը ներկայացնելու համար.

- ◆ Նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը (այսուհետ՝ հայտարարագիր) թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:
- ◆ Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների (բացառությամբ Երևանի ավագանու), ինչպես նաև Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ հայտարարագիրը ներկայացվում է նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:
- ◆ Թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը հայտարարագիրը ներկայացնում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ Adobe Acrobat  (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ: Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:
- ◆ Հայտարարագիրը ներկայացվում է թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կատարված ծախսերի վերաբերյալ (տես ՀՀ ԿԸՀ 16.02.12 թ. N 33 որոշումը ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով պաշտոնական

պարզաբանման մասին), հայտարարագրին կցվում են այդ նպատակով կնքված պայմանագրերը:

- ◆ Ավագանու անդամի և մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուն պարտավորված չէ բացել հիմնադրամ, հետևապես և ներկայացնել հայտարարագիր, եթե զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում է (կարող է օգտագործել) 500 000 դրամը չգերազանցող գումար:

2. Հայտարարագիրը կազմելու համար.

- ◆ «ընտրության անվանում» տողում լրացվում է այն ընտրության անվանումը, որին թեկնածուն, կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը մասնակցում է:
- ◆ «թեկնածուի անուն, հայրանուն, ազգանուն, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում» տողում լրացվում է հայտարարագիրը ներկայացնող թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը, համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը:
- ◆ «հաշվետու ժամանակահատված» տողում լրացվում է այն ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հայտարարագիրը: Որպես հաշվետու ժամանակահատվածի սկիզբ բոլոր հայտարարագրերում՝ լրացվում է թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցման օրը, ամիսը, տարեթիվը: Առաջին 2 հայտարարագրերի դեպքում որպես հաշվետու ժամանակահատվածի վերջ՝ լրացվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի համապատասխանաբար 10-րդ և 20-րդ օրերի օրը, ամիսը, տարեթիվը, իսկ վերջին հայտարարագրի դեպքում՝ քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը: Յուրաքանչյուր հաջորդ հայտարարագիր իր մեջ ներառում է նախորդ հայտարարագրերի տվյալները:

◆ «Մուտքեր» մասի.



1. «Հիմնադրամի մուծումների ժամանակագրություն 1» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը,

- ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են մուծումները,
2. «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում լրացվում է յուրաքանչյուր օրվա մուծումների ընդհանուր չափը՝ ՀՀ դրամով,
 3. «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում նշված գումարների ընդհանուր չափը:

◆ **«Ծախսեր» մասի.**



1. «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրություն 3» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են ծախսերը, իսկ մինչև հիմնադրամի ձևավորումը ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դեպքում, լրացվում է «մինչև հիմնադրամի ձևավորում» բառերը կամ դրանց հապավումը՝ «ՄՀԶ»,
2. «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանում 4» սյունակում ըստ օրերի առանձին տողերում լրացվում է զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման նպատակով ձեռք բերված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի անվանումը,
3. «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման համար կատարած ծախսի փաստացի չափը: Այն դեպքերում երբ 4-րդ սյունակում նշված ապրանքը կամ ծառայությունը ձեռք է բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ինչպես նաև անվճար ստացման դեպքում, ապա ծախսի փաստացի չափը նշվում է «0 (զրո)»,
4. «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը 6» սյունակում նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքը: Եթե «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված գումարը

համընկնում է հայտարարագրման ենթակա ձեռք բերված ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքի հետ, ապա 6-րդ սյունակում նշվում է նույն թիվը: Մինչև հիմնադրամի ձևավորումը ստացված ապրանքների և ծառայությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ստացված հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը 5-րդ սյունակում նշված թվից ավելի բարձր է, նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը,

5. «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալներ 7» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները (պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, վճարման անդորրագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը և այլն),
6. «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը 8» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը՝ եթե այդպիսիք առկա են: Եթե հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորություններ առկա չեն, ապա նշվում է «0 (զրո)»,
7. «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված թվերի ընդհանուր չափը և «ԸՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը չափ 6» սյունակում նշված թվերի ընդհանուր չափը:

◆ «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողում նշվում է հիմնադրամից կատարված, հայտարարագրման ոչ ենթակա, ուստի և հայտարարագրի մյուս տո-

ղերում չներառված, ծախսերի ընդհանուր չափը:

- ◆ «Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը» տողում նշվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակի «Ընդամենը» տողի և «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողի թվերի գումարը:
- ◆ «Հիմնադրամում մնացած գումարի չափ» տողում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջում հիմնադրամում մնացած չօգտագործված գումարի չափը, որը հավասար է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակի ընդամենը տողի և «Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափ» տողի թվերի տարբերությանը:
- ◆ Հայտարարագրի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրի թերթերի և դրան կից պայմանագրերի, փաստաթղթերի թերթերի թվերը: Հայտարարագիրը ստորագրում է թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը, լրացվում է հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը, լիազոր ներկայացուցչի ստորագրելու դեպքում լրացվում է նրա անունը, հայրանունը, ազգանունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 փետրվարի 2012թ.
ք.Երևան

N 33

ՈՐՈՇՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ
26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի «դ» կետով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և նպատակ ունենալով բացառելու Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի տարաբնույթ ընկալումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ՊԱՐԶԵՑ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Նախընտրական հիմնադրամի միջոցները թեկնածուները կարող են օգտագործել նախընտրական քարոզչություն իրականացնելուն ուղղված ցանկացած միջոցառման ֆինանսավորման համար:»:

Նույն հոդվածի 2-ից-5-րդ մասերի համաձայն.

«2. Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այդ նպատակով նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է սույն օրենսգրքով:

Սույն մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:

3. Եթե հիմնավորվում է, որ նախընտրական քարոզչության համար մատուցված ապրանքը կամ ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա կենտրոնական ընտ-

րական հանձնաժողովը որոշում է կայացնում՝ պարտավորեցնելով թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով գումար փոխանցել պետական բյուջե:

4. Եթե հիմնավորվում է, որ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում՝ պարտավորեցնելով թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով գումար փոխանցել պետական բյուջե:
5. Եթե նախընտրական քարոզչության համար ծախսված գումարի և սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պետական բյուջե վճարվող գումարների գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 10 տոկոսը, ապա ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա դատարանը ուժը կորցրած է ճանաչում թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը:»:

Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ: Հայտարարագրին կցվում են թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կնքված պայմանագրերը:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Հայտարարագրում նշվում են՝

1. նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ժամանակագրությունը, մուծված գումարի չափը.
2. սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար կատարված

ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.

3. հիմնադրամում մնացած գումարի չափը:»:

Վերոհիշյալ իրավանորմերով կանոնակարգվում են նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսերի իրականացման բնագավառում առաջացող որոշակի իրավահարաբերություններ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ իրավանորմերում տեղ գտած նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում կատարված ծախսերը ըստ դրանց անմիջական նպատակի կամ ուղղվածության պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝

ա) անմիջականորեն, բուն քարոզչության իրականացմանն ուղղված և համապատասխանաբար օրենսգրքով սահմանված կարգով հայտարարագրման և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերահսկողության ենթակա ծախսեր,

բ) անմիջականորեն քարոզչության իրականացմանը չուղղված՝ տեխնիկական, կազմակերպչական և այլ նմանատիպ խնդիրների լուծմանն ուղղված ծախսեր, որոնք օրենսգրքով սահմանված կարգով հայտարարագրման և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերահսկողության ենթակա չեն:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված ծախսերի տեսակները մեկ ամբողջականության մեջ դիտարկելու պարագայում, ակնհայտ է դառնում, որ դրանք բոլոր այն ծախսերն են, որոնք ուղղակիորեն վերաբերվում են բուն քարոզչական գործունեությանը: Այս ծախսերի դասակարգման սկզբունքի հիմքում ընտրողի կամքի ձևավորմանն անմիջականորեն ուղղված գործողությունների, միջոցառումների համար կատարված ծախսերի՝ ձեռքբերված ապրանքների և ծառայությունների նկատմամբ օրենսգրքով սահմանված կարգով վերահսկողության ապահովումն է: Այս ծախսերի առավելագույն չափը սահմանված է օրենսգրքով: Նախընտրական հիմնադրամը ձևավորվելուց հետո նշված ծախսերի ֆինանսավորման համար կարող են օգտագործվել միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այն դեպքում, երբ նշված ապրանքները, ծառայությունները ձեռք են բերվել մինչ հիմնադրամի ձևավորումը կամ ձեռք են բերվել շուկայական արժեքից ցածր գնով կամ դրանք ստացվել են առանց ծախսեր կատարելու ևս համարվում են օրենսգրքով սահմանված կարգով հայտարարագրման և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերահսկողության ենթակա: Օրենսգրքի 26-րդ հոդված 2-րդ, 3-րդ 4-րդ և 5-րդ մասերը իրար հետ համադրելով պետք է ենթադրել, որ այս ծախսերի առավելագույն չափի սահմանափակումը վերաբերում է ոչ թե դրանց ուղղությամբ կատարած փաստացի ծախսերին, այլ նրանց շուկայական արժեքների գումարին:

Այն ապրանքները և ծառայությունները, որոնք թեև ձեռք են բերվել կամ ստացվել են նախընտրական քարոզչության շրջանում, սակայն ուղղված չեն բուն քարոզչական գործունեությանը, այսինքն՝ ուղղակիորեն չեն ձևավորում ընտրողի կամքը, այլ կրում են կազմակերպչական, տեխնիկական և այլ բնույթ,

և ուղղված են աշխատանքների պատշաճ կազմակերպմանը, չեն դիտարկվում որպես բացառապես նախընտրական հիմնադրամի միջոցներից կատարվող և օրենսգրքով սահմանված կարգով հայտարարագրման ենթական ծախսեր:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է

1. Թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության ընթացքում կատարված օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ուղղությամբ կատարված ծախսերը հիմնադրամը ձևավորումից հետո ֆինանսավորվում են բացառապես նախընտրական հիմնադրամների միջոցներից: Նշված ապրանքները և ծառայություններն իրենց շուկայական արժեքով պետք է հայտարարագրվեն անկախ դրանց ստացման աղբյուրից, ժամանակից և ձևից: Այս ապրանքների և ծառայությունների համար օրենսգրքով սահմանված ծախսի առավելագույն չափը պետք է հաշվարկվի դրանց շուկայական արժեքների հիման վրա:
2. Հայտարարագրման ենթակա չեն այն ծախսերի, որոնք օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսեր չեն հանդիսանում, ինչպես օրինակ՝
 - ◆ այն տպագիր և այլ նյութերի ձեռքբերման համար կատարված ծախսերը, որոնք չեն կրում քարոզչական բնույթ, չեն հանդիսանում ընտրողներին տրամադրվող քարոզչական նյութեր.
 - ◆ օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ընտրական շտաբների վրա տեղադրված, ընտրության համար կազմավորված ընտրական տեղամասերի թիվը չգերազանցող, յուրաքանչյուր պաստառի (ցուցանակի) մակերեսը 6 քառակուսի մետրը չգերազանցող, թեկնածուին կուսակցությանը (կուսակցության դաշինքին) կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր չներառող, պաստառների (ցուցանակների) համար կատարված ծախսերը.
 - ◆ այն դահլիճների կամ տարածքների վարձակալման համար կատարված ծախսերը, որոնք չեն օգտագործվում քարոզչություն իրականացնելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.Մուկույան



Սույն ձեռնարկը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի օժանդակությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը, և այն կարող է չհամընկնել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության կարծիքի հետ:

This guidebook is made possible by the support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the responsibility of the Central Electoral Commission of the Republic of Armenia and the International Foundation for Electoral Systems and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.